ԿԱՐԾԻՔ

Հայցորդ Կարեն Սեդրակի Թոխաթյանի

«Հայաստանի ժայռապատկերների տիպաբանությունը և պատմամշակութային նշանակությունը» թեմայով

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Կ. Թոխաթյանի ատենախոսությունը նվիրված է նյութական և հոգևոր մշակույթի կոմբինացված ոլորտի համալիր քննությանը, որն ամփոփում է մարդկային հանրույթի կողմից շրջակա միջավայրի գիտական ընկալումը, այդ թվում՝ հոգևոր-պաշտամունքային պատկերացումները և ընդհանրապես աշխարհընկալման բոլոր դրսևորումները միասին: Ընդ որում, ատենախոսն իր առջև դրել է ժայռապատկերագիտության բազմաթիվ հիմնախնդիրներ՝ թվագրում և պարբերացում, բովանդակային կազմ, տոմարական նշանակություն և այլն: Համապատասխանաբար, ընդարձակ է նաև աշխատանքի մեթոդական ապարատը՝ պայմանավորված քննարկվող ոլորտների բազմապրոֆիլ բնույթով:

Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների գիտական ուսումնասիրությունը, որը սկսվել էր դեռևս նախորդ դարի 70-ական թվականներին, չնայած նկատելի հաջողություններին, ներկայումս չի կարելի համարել հիմնավորապես հետազոտված: Նշենք թեկուզ քիչ թե շատ ընդգրկուն կորպուսի բացակայությունը:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, յուրաքանչյուրն իր հերթին ենթագլուխներից, որոնք ներկայացնում են քննարկվող թեմատիկայի մի կոնկրետ ոլորտ: Ստորև համառոտ անդրադառնամ գլուխների բովանդակությանը, առանց խորանալու քննարկվող հարցերի էության մեջ:

Առաջին գլուխը՝ «Հայաստանի ժայռապատկերները», ներկայացնում է ժայռապատկերի՝ որպես պատմամշակութային սկզբնաղբյուրի էությունը, գործառույթները, ուսումնասիրման հիմունքները, տիպաբանությունը, ժամանակագրությունը, հայաստանյան ժայռապատկերների հարաբերվածությունը Երկրագնդի այլ շրջանների համանման հուշարձանների հետ և հարակից հարցեր: Հեղինակն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է ներկայիս և պատմական Հայաստանի տարբեր շրջաններից հայտնաբերված ժայռապատկերների ցանկը դրանց ուսումնասիրությունների հետ միասին:

Ատենախոսի կողմից հստակեցվել են իր իսկ ձևակերպմամբ «ժայռապատկերաբանություն» անվանումը կրող գիտաճյուղի հիմունքները՝ հայեցակարգը, դրույթները, մեթոդական կառույցը և հասկացութային հենքը՝ սահմանումները, եզրաբանությունը և չափորոշիչները: Սա արտակարգ կարևոր է այն առումով, որ ողջ հետազոտությունը հենվում է հենց այսպիսի մոտեցման վրա:

Փաստացի, Կ. Թոխաթյանի աշխատանքի այս բաժինը կարելի է համարել լուրջ ներդրում հայ ժայռապատկերագիտության բնագավառում: Առանց չափազանցության պետք է նշել, որ ատենախոսը քաջատեղյակ է ժայռապատկերագիտության շուրջ առկա մեծաքանակ տարալեզու ուսումնասիրություններին, ինչը թույլ է տվել քննարկվող խնդիրները ներկայացնել պատշաճ մակարդակով:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Հնաստղագիտական հուշարձաններ», ամբողջությամբ նվիրված է Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների տիեզերագիտական պատկերացումներին, այդ թվում՝ երկնային լուսատուների, երևույթների և հարակից հարցերին: Հետազոտությունն ընթացել է ըստ տիպաբանական սկզբունքի՝ բնակեցված քարանձավ, դամբարան, քարակոթող, քարաշարք, երկնադիտական կենտրոն, պաշտամունքային կառույց: Դա թույլ է տվել հեղինակին հստակեցնել աշխարհայացքային դրսևորումները ըստ վերոնշյալ յուրաքանչյուր կառույցի:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Ժայռապատկերաբանական գիտելիքի կիրառումը պատմագիտական և մշակութաբանական խնդիրներում», քննարկվում են մի շարք հիմնախնդիրներ՝ ժայռապատկերների թվագրումը, թվագրման աստղագիտական եղանակները (երկու օրինակների հիման վրա՝ Վարդենյաց լեռնանցքի աստղաքարտեզների և Սևսարի երկնադիտարանի), օրացույցը և տոմարը, ինչպես նաև հնադարյան արվեստի ծագման և Հայկական լեռնաշխարհում դրանց դրսևորման հարցերը: Վերոհիշյալ խնդիրները կարևոր են այն առումով, որ դրանց շուրջ առ այսօր չկա միասնական, համընդհանուր ընդունելություն գտած տեսակետ: Հեղինակի մոտեցումն այդ հարցերին անաչառ է և վստահություն է ներշնչում: Ըստ իս, հատկապես կարևոր է հուշարձանների թվագրման բաժինը, որտեղ հեղինակն առանձնացնում է բնական և մարդածին իրողությունները՝ իրենց համապատասխան ենթակետերով հանդերձ:

Կ. Թոխաթյանի ատենախոսության կարևոր առանձնահատկությունը և նորույթը անկասկած այն է, որ հեղինակը տասնամյակներ շարունակ անձամբ է հետազոտել ժայռա-

փորագիր հուշարձանները և չի հենվել միայն այլ հետազոտողների ուսումնասիրությունների արդյունքներից բխող եզրակացությունների ու ենթադրությունների վրա: Նրա կողմից գրանցվել և գիտական շրջանառության մեջ են դրվել շուրջ 3500 նոր ժայռապատկեր և երկու տասնյակ ծիսապաշտամունքային և երկնադիտական կառույց:

Ատենախոսության մասին կարծիքս կցանկանայի հավելել որոշ դիտողություններով և ցանկություններով:

1. Առաջին դիտողությունը վերաբերում է ոչ այնքան աշխատանքի կոնկրետ բաժնի կամ տեսակետի, այլ «լիրիկական շեղումներին», ինչը հատկապես տեսանելի է երրորդ գլխի վերջին ենթաբաժնում (էջ 170-186): Կարծում եմ կարիք չկար հանգամանորեն բացատրել, թե ինչ է նշանակում արվեստ, երբ և ինչու է այն ծագել և ինչպես են այն բնորոշում, ասենք, Դավիթ Անհաղթն ու Հովհան Որոտնեցին և այսպես շարունակ: Նման զեղումներ կան աշխատության նաև այլ բաժիններում: Ընդ որում, բավական շատ են նաև այս կամ այն տերմինը նշող բառարմատների ստուգաբանություններ: Այդպիսի շեղումները որևէ կերպ չեն նպաստում քննարկվող հարցերի ուսումնասիրությանը:

2. էջ 174-ում գրված է. «Գրի այս նախաձևերը հետագայում՝ վաղ բրոնզի դարում, զարգանալով վերածվեցին գաղափարագրի: Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում ձևավորվեցին վանկագիրն ու հնչյունագիրը՝ *գծապատկեր, սեպանշան* և *տառ* տարրերի միջոցով»: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ըստ հեղինակի, *վանկագիրը* համարժեք է *գծապատկեր*, *սեպանշանին*, քանի որ *տառը* արդեն հնչյունական գիր է: Իրականում գծապատկերային գրի փոխարեն պետք է օգտագործել *պատկերագիր* (այդպիսին էին հին եգիպտական և փոքրասիական պատկերային կամ հիերոգլիֆային գրային համակարգերը) տերմինը:

3. էջ 36-ում օգտագործված է «երիտասարդ հոլոցեն» երկրաբանական տերմինը, որը ճիշտ կլիներ գրել «վաղ հոլոցեն», վերջինս համատարած կիրառվում է երկրաբանական բոլոր հետազոտություններում:

4. էջ 52-ում օգտագործված է «ներմուծված ու տեղական սեպագրեր» արտահայտությունը: Նշեմ, որ սեպագիրը մեկն է և հստակ ներմուծված է Միջագետքից: Եթե ատենախոսը նկատի ունի ուրարտական սեպագրական համակարգը, ապա դա ընդամենը միջագետքյանի թեթևակի վերաձևավորումն է, այնպես ինչպես մենք տեսնում ենք Միտտանիի և Խեթական տերության գրիչների կիրառած սեպագրի պարագայում:

5. Էջ 65-ում խեթական մայրաքաղաք Խաթթուսասի մոտ գտնվող հայտնի սրբավայրի անունը տրված է Ալաճա, բայց պետք է լինի Ալաջա:

6. Էջ 73-ում գրված է *ինկեր* (խոսքը Հարավային Ամերիկայի խոշորագույն տերության մասին է): Այս անվանումը, որը հանդիսանում էր կայսրության տիրակալների տիտղոսը, իրականում հնչում էր *ինկա* և կարիք չկա այն հայացնել:

7. Էջ 81-ում գրված Գիլզանիի (սեռ. հոլով) անվանումը պետք է տալ Գիլզանու ձևով, ինչպես դա առկա է աղբյուրում:

8. Ատենախոսության մեջ հաճախ տրվում են ժամանակակից տեղանունների հայերեն կամ հայացված գրություններ, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ արդարացված չէ: Ընթերցողը ստիպված է ժամանակ ծախսել պարզելու, թե որի մասին է խոսքը: Օրինակ, Առյուծաբլուր (ներկայիս Մալաթիա քաղաքից ոչ հեռու գտնվող Արսլանթեփե հնավայրը, այն է՝ մ.թ.ա. II-I հազ. Մալդիա, Միլիդիա քաղաքը), Պորտաբլուր (այլոց կողմից երբեմն օգտագործվում է Պորտասար ձևով), որը հնագիտական հրատարակություններում լավ հայտնի Գյոբեքլի թեփեն է: Հասկանալի է, որ մեզ համար հաճելի է գործ ունենալ հայերեն հնչող տեղանունների հետ, սակայն գիտական առումով առավել ընդունելի է համընդհանուր կիրառություն ունեցող օտար անվանման կիրառությունը: Մասնավորապես, Պորտաբլուր/Պորտասար ձևը, որքան ինձ հայտնի է, մեր աղբյուրներում վկայված չէ:

Վերը նշված դիտողությունները մասնավոր հարցեր են և որևէ կերպ չեն ստվերում ատենախոսության ակնհայտ արժանիքները: Դրանք կարելի է հեշտությամբ շտկել աշխատանքի հրատարակության ժամանակ:

Կ. Թոխաթյանի ատենախոսության անտարակույս առավելություններից մեկը օգտագործված մեծաքանակ մասնագիտական գրականությունն է: Գրականության ցանկն ընդգրկում է շուրջ 960 անուն տարալեզու աշխատություն, որից 876-ը հայերենով, ռուսերենով և եվրոպական այլ լեզուներով գրված մենագրություններն ու հոդվածներն են: Մի ողջ հատոր է կազմում հավելվածը, որտեղ ներառված են քարտեզները, ժայռապատկերները և համադրված մյուս հուշարձանները:

Կ. Թոխաթյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, արված է գիտական պատշաճ մակարդակով: Հիմնական դրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են իր հրատարակած հոդվածներում: Այն գիտական արժեք

ներկայացնող, այժմեական ու հրատապ, ավարտուն, համալիր և հաջողված հետազոտություն է, և մինչ օրս այս թեմայով ամբողջական ուսումնասիրություն չի իրականացվել:

Կարծում եմ, որ հրապարակային պաշտպանության ներկայացված այս ատենախոսությունը բոլոր չափանիշներով լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի ներկայացված պահանջներին, իսկ հեղինակ Կարեն Թոխաթյանը միանգամայն արժանի է իր հայցած՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արամ Քոսյան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր Արամ Քոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտքարտուղար՝

Գ. Մարգարյան

11.12.2020